## Խմբագրութեան Արարատ Ամսագրոյ։

Ներկայ տասնևիններորդ դարս ուսումնականութեան դրօշը իր ուսին առած կը փայլէ. Հայկազեան որերոց ոգին ալ կարծես թէ նորքին ազգեցութեան եռանդ մը ունեցած է իր սրտին մէջ՝ նոյն դրօշը իր ձեռքին բռնած պարզելու. արդէն Օսմանեան Պետութեան ներքև գտնուած Հայաբնակ քաղաքներ ամէնքն ալ ազգու բորբոքով վառուած ամէն տեղ դպրոցներ և ուսումնարաններ կան հաստատուած՝ թէ արական և թէ իգական սեռերու համար. որոց շարքի մէջ կգտնուի և մեր Կարուց քաղաքը և վիճակը, որ Օսմանեան Տէրութեան սահմանագլուխը մէկ անկիւն մը կհամարուի. քաղաքական ժողովուրդը դուրսի քաղաքներէ հաւաքուած երկու հարիւր տան չափ խումբ մը կըկազմէն. որևթէ մեծ մասը իրանց օրական ապրուստը միայն կարող կրնան ըլլալ ձեռք բերելու. 1853 թուէն յետ՝ ժողովուրդը իրենց բարեկացութիւնը դպրոցի համար ձեռք բերելու որքա՛ն որ իրենց աշխատանքը չըխնայեցին, իրենց նըպատակին համեմատ հոլիւ մը չունենալուն բրած ջանքերէն պտուղ մը չկարացին շահիլ. թէ և իրենց կարիքին բաղդատութեամբ մեծ ծախքեր ըրին քաղաքի եկեղեցին 'ի հիմանց նորոգելով՝ առաջնորդարան և վարժատուն շինելով, սակայն իրենց ցանկութեան նպատակին չէին ժամանած՝ իրենց մանկտիքը ուսման կարօտեալ մնալուն համար. ժողովըրդեան իրենց զաւակները կրթութեան փափագնիրը որ բորբոքած կար սրտերնուն մէջ, անիկա լրանալուն Տէր գործակիր հոլիւ մ'ալ պարգևեց գերապատիւ Գրիգորիս վարդապետը, որ երեք տարի միջոց կըլլայ նորին սրբութեան մեր քաղաքը շնորհ բերելը. ձեռնտուութեամբ բարեպաշտ իշխանաց քաղաքիս և հասարակ ժողովըրդեան բաղձանքնիս ամէնն ալ տեղը հասուց, արական և իգական սեռերու ուսումնարան և դպրոց հաստատելով և բարեկարգութեան մէջ մտցնելով, որ հիմակու հիմա 120ին չափ մանկտիք և ութսունի չափ օրիորդք՝ ուսման մէջ քայլ առ քայլ յառաջ կընթանան, և սորվելիքներն են մանկտեաց, Քերականութիւն, Ազգային Պատմութիւնն, Աշխարհագրութիւն, Թուաբանութիւն և Վայելչագրութիւն, և օրիորդաց՝ հասարակ ընթերցանութիւն, քրիստոնէական, և վայելչագրութիւն. որոնք այս տարի երրորդ անգամ՝ իրենց քննութիւնքն տալով բաւական յառաջացել են թէ՛ մանկտիք և թէ՛ օրիորդք. նոյնպէս և Կարսի բոլոր վիճակը՝ որ կըկարօտէր հովուական ամէն տեսակ բարեկարգութեանց, այն ևս ըստ կարի Գ. Գրիգորիս հայր սուրբի ջանիւք քչիկ քչիք կարգի մտաւ. քանի մը մեծ գիւղերու մէջ մասնաւոր դպրոցներ հիմնարկելով, որոնք երբէք չէին տեսած. Նա մանաւանդ Հոռոմոսի վանքը՝ որ Անիի սահմանագլուխը կըգտնուի, որ վերը յիշած թուէն սկսեալ մինչ ներկայէս երկու տարի յառաջ բոլորովին խանգարուած և աւերման վիճակի հասած կար, այն ևս ջանիւք Առաջնորդ սուրբ Հօր Տէր Գրիգորիս վարդապետի անխոնջ աշխատութեամբ՝ շինութեամբ և բարեկարգութեամբ նորոգ վայելչութիւն մը ստացաւ, և որ ամէնէն աւելի կարևորն էր՝ ժառանգաւորաց դպրոց մ'ալ շինելով քանի չափ գիւղական մանկտիք անոր ծոցը ժողովելով ուսում սորվելու շարունակութիւնը գործի դրեց. որով Կարուց քաղաքի կամ վիճակի ժողովուրդ մեծ մխիթարութիւն ունեցաւ, և կյուսանք որ Նորին սրբութիւնն Գ. Գրիգորիս Հայր սուրբի անխոնջ աշխատանօք Կարս քաղաքը իր վիճակով ազգին նպատակին համեմատ 'ի շարս կրթեալ քաղաքաց մտնի. ուստի խնդրեմ Ձեր պատուական Արարատ ամսագրոյ մէկ անկիւնը տեղի շնորհէք համառօտ նամակիս հրատարակութեան։

Ն. Զօհրաբաբէկ քահանայ Պօղոսճեանց։

22 Սեպտեմբերի 1870
ի Կարս

---

## Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Անցեալ սեպտեմբերի թիւ Ն. Արարատ պատուական ամսագրոյդ թերթերի մէջ հրատարակուած Երևանայ Փոխ—Թեմակալի Գեր. Մեսրոպ Վարդապետի Սմբատեանց առ Հայազգիս Երևանայ գրած հրաւէրը՝ (որոյ բովանդակութիւնն էր հանել Թեմական Հոգևոր Դպրոցը ոմանց իրա-